«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ինչպես իրականացնել հայոց լեզվի և գրականության արդյունավետ ինտեգրված գնահատում 5-6-րդ դասարաններում»

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Հասմիկ Ադամյան

ՈՒսումնական հաստատություն Հաղպատի միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

ՄԱՅՐԵՆԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁ 5-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ 4

ԱՄՓՈՓՈՒՄ 10

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 11

ԻՆՉՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՒՄ 5-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

5-6-րդ դասարաններում մայրենիի դասավանդումն իրականացվում է՝ ելնելով հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշիչներից ու ծրագրերից: Այդ դասընթացի հիմնական նպատակադրումներն են՝ աշակերտների հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների, ինքնուրույնության, բանավոր ու գրավոր խոսքի զարգացումը:

Այս տարիքային խմբի աշակերտի գիտելիքը մայրենիից գնահատվում է մեկ միավորային գնահատականով, որն արտահայտում է նրա կողմից և՛ հայոց լեզվի, և՛ գրականության գիտելիքների յուրացման մակարդակը՝ դառնալով այդ առարկաների իմացության միասնական ցուցիչ: Անառարկելի է, որ ուսուցչի համար ինտեգրված ուսուցման պայմաններում հեշտ չէ աշակերտին գնահատել այնպես, որ այդ գնահատականը միշտ լինի համոզիչ, արդարացի և հիմնավորված: Չէ՞ որ մենք, ըստ էության, մեկ թվանշանով գնահատում ենք աշակերտին երկու առարկայից ձեռք բերած գիտելիքների համար: Գնահատելու տարբերակը, որը մենք առաջարկում ենք, կարելի է անվանել փուլային:

Աշակերտին գնահատելիս չպետք է մոռանանք, որ նրա համար լուծվում է մի շատ կարևոր խնդիր ևս՝ սոցիալականացման խնդիրը: Դրան է միտված աշակերտի պատասխանը գնահատելու՝ մեր կարծիքով արդյունավետ մի միջոց, որի մասին ցանկանում ենք խոսել ստորև:

Մեր մոտեցման մեջ հավասար չափով կարևորվում է դասի և՛ ակադեմիական կամ առարկայական, և՛ սոցիալական նպատակի սահմանումը, որի իրագործումը դեր է խաղում երեխայի աշխարհաճանաչողության, նրա ,,ես՛՛ կոնցեպցիայի, այսինքն՝ անհատի՝ ինքն իր մասին ունեցած պատկերացումների համակարգի ձևավորման ու զարգացման գործում: Այսինքն՝ կարողություններին զուգահեռ առաջ է մղվում հմտությունների զարգացման անհրաժեշտությունը: Եվ, իհարկե, այստեղ պետք է անպայման հաշվի առնել աշակերտի տարիքային առանձնահատկությունները և հետաքրքրությունները՝ կապված ուսումնական գործընթացի հետ: Որո՞նք են այդ առանձնահատկություններն ու հետաքրքրությունները::

<u>Առաջին.</u> Ուսումը երեխայի համար նշանակալից գործունեություն է, որը նրա մեջ առաջացնում է ձգտում՝ հասնելու ցանկալի վերջնարդյունքին, այսինքն՝ իր առջև դրված նպատակին:

Զգտման արդյունքում նրա մոտ ձևավորվում են կամային հատկանիշներ (համառություն, համբերատարություն, կամքի ուժ, զիջողամտություն, սկզբունքայնություն, նպատակասլացություն), և մենք ունենք խնդիր՝ ամեն կերպ խթանելու այդ ձգտումը:

Երկրորդ: Տասնմեկից տասներկու տարեկանը երեխայի սեփական անձի ճանաչման շրջանն է, երբ արժևորվում է շփումը հասակակիցների հետ: Իսկ այդ շփումը տեղի է ունենում ոչ միայն դասամիջոցների, այլ նաև դասաժամի ընթացքում: Ընկերների կարծիքը և նրանց կողմից ընդունված, ճանաչված լինելը դառնում է կարևոր: Դեռահասը իր դրսևորման հիմնական միջավայրը համարում է դասարանական կոլեկտիվը, որտեղ կարող է համագործակցել և հաղորդակցվել ընկերների հետ: Այս վերջին գործունեությունը՝ հաղորդակցականը, շատ կարևոր է երեխայի անհատականության ձևավորման գործում, քանի որ հենց այդ ճանապարհով է տեղի ունենում ինքնաճանաչողությունը: Մեր մոտեցմամբ մենք փորձ ենք անում ղեկավարել և ուղղորդել դեռահասի ինքնաճանաչման և դիմացինին ապրումակցելու ձգտումն ու նրա հետ համագործակցելու բուռն մղումը:

Երրորդ: Ուսման ընթացքում այս տարիքի երեխան ձեռք է բերում ոչ միայն նոր գիտելիքներ, այլ նաև որոշակի սոցիալական կարգավիճակ: Նրա գիտակցությունը վերաձևավորվում է, նա փորձում է գնահատել իր տեղն ու դերը շրջապատում, որը հիմնականում դասընկերների միջավայրն է:

Չորրորդ. Ուսումնական գործընթացը երեխային հնարավորություն է տալիս մեծահասակ երևալու իր իսկ աչքում, որովհետև նա ստանում է ինքնուրույն դրսևորվելու, ինքնարտահայտման հնարավորություն:

Ընդհանրացնելով վերը ասվածը՝ կարող ենք ձևակերպել մեր մոտեցումը այս տարիքային խմբի աշակերտներին գնահատելու խնդրին: Այն ենթադրում է՝

ա) փուլային գնահատում, որը կատարվում է՝ հիմք ունենալով հայոց լեզվի և գրականության առարկայական բնութագրերը,

բ) կոլեկտիվ գնահատում, որի դեպքում գնահատվողը բավարարված է, քանի որ գնահատականը սոցիալական և տարիքային հիմնվել է ոչ թե ուսուցչի անվերապահ ու անառարկելի, այսպես ասած, դատավճռի, այլ նույն հարթությանը պատկանող հասակակիցների ընդհանրական կարծիքի վրա,

գ) խմբային աշխատանք, որտեղ, անշուշտ, կարևորվում է ուսուցչի վերահսկող, ուղղորդող և կարգավորող գործառույթը: Այս կերպ իրականանում է աշակերտակենտրոն ուսուցման գործընթաց, որտեղ զարգանում են սովորողների ճանաչողական, ստեղծագործական կարողությունները և որտեղ աշակերտը կազմակերպող է, սովորող և սովորեցնող,

դ) տեսակետ արտահայտելու ազատություն, որով ինքնուրույնություն դրսևորելու հնարավորություն տալով՝ միաժամանակ աշակերտի մոտ ձևավորում ենք պատասխանատվության զգացում իրեն վստահված գործի նկատմամբ:

Արդյունքում ստանում ենք հիմնավորված գնահատում, որտեղ ուսուցիչը միանձնյա դատավոր չէ, որի վճիռը կարող է չհամոզել աշակերտին կամ մերժվել նրա կողմից:

Մեր ասելիքը հիմնավորենք կոնկրետ մեկ դասի ուսուցման օրինակով:

ՄԱՅՐԵՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԸ 5-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Պատահականության սկզբունքով մենք թեման ընտրել ենք 5-րդ դասարանի առարկայական ծրագրից:

Առարկան՝ Մայրենի

Դասարանը՝ 5-րդ

Բաժինը՝ Երկնքից երեք խնձոր ընկավ

Թեմաները՝ ա) Ավ. Իսահակյան.,,Նուկիմ քաղաքի խելոքները,,

բ) Ձ-ծ-ց, ջ-ճ-չ բաղաձայնների ուղղագրությունը և ուղղախոսությունը

Ամենասկզբում պետք է հիշել, որ ցանկացած աշխատանքի հաջողության նախադրյալը ճիշտ պլանավորումն է :

Դասի նպատակները սահմանելիս կարևորում և առանձնացնում ենք երկու կետ՝ 1.ակադեմիական կամ առարկայական և 2. սոցիալական

Նպատակները 1. առարկայական (ակադեմիական)

իմանալ՝ ա) հեքիաթի հիմնական գաղափարը

բ) Ձ-Ծ-Ց, Ջ-Ճ-Չ բաղաձայնների ուղղագրությունը և ուղղախոսությունը

կարողանալ՝ ա) անսխալ բանավոր խոսք կազմել

բ) վերարտադրելով հեքիաթի բովանդակությունը՝ եզրահանգումներ անել

գ) կիրառել ձեռք բերած նախնական գիտելիքները բառագիտությունից

դ) կիրառել ձ-ծ-ց, ջ-ճ-չ և մնացած բաղաձայնների ուղղագրության և ուղղախոսության կանոնները գրավոր և բանավոր խոսքում

2. սոցիալական նպատակ

ա) պատկերավոր մտածողության զարգացում

բ) քննադատական մտածողության ձևավորում

գ) ուրիշի կարծիքը հարգելու կամք և պատրաստակամություն

Դասի ակադեմիական և սոցիալական նպատակների ճշգրիտ սահմանումը դասապրոցեսի հաջողության հիմքն է, որովհետև այդ նպատակների իրականացմանն են միտված հետագա մեր բոլոր քայլերը՝ ներառյալ թերևս աշակերտի համար ամենակարևորը՝ գնահատելը: Այստեղ պետք է նշենք, որ գնահատականը, բացի թվանշանային միավորից կարող է արտահայտվել այլ ձևերով, որոնք կարող են լինել խրախուսանք բառերով,

աստղիկներ, դրոշակներ, և, վերջապես, բոնուսներ, որոնք կարող են տալ արտահերթ պատասխանի կամ ստացած թվանշանը դեպի վեր կլորացնելու լրացուցիչ հնարավորություն: Աշակերտի գնահատականը պետք է հնարավորինս համոզիչ կերպով արտահայտի նրա իմացության համապատասխնությունը գիտելիքների այն մակարդակին, որը ցանկանում է ապահովել ուսուցիչն իր նպատակադրման մեջ:

Դասն սկսվում է նախապատրաստական մասով, որն անհրաժեշտ է հաշվառում անցկացնելու, կազմակերպչական հարցերի լուծման, տնային աշխատանքը ստուգելու, դասը վերհիշելու համար: Ապա դրան հետևում է խթանումը, որի հիմնական նպատակներից են՝ ա) սովորողներին դասի նյութի յուրացմանը նախապատրաստելը, բ) աշակերտներին ակտվացնելը՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ, գ) աշակերտների մոտ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում առաջացնելը: Նախ և առաջ անհրաժեշտ է վերհիշել հայերենի հնչյունները և նրանց դասակարգումը՝ շեշտադրումը կատարելով եռաշարք բաղաձայնների վրա: Պրոյեկտորով ցուցադրում ենք այդ թեմային վերաբերող նյութը՝ պատրաստված Smart Notebook ծրագրով: Այս փուլում կիրառվող մտագրոհի և գաղափարների քարտեզագրման մեթոդները խմբային աշխատանքի արդյունավետ ձևեր են և լավագույնս իրագործում են խթանման փուլի նպատակները: Դրանցից առաջինը պետք կգա տեքստային աշխատանքի, երկրորդը՝ լեզվական նյութի համար:

Առաջին մեթոդը կիրառելիս գործածում ենք այսպիսի եղանակ. գրատախտակին գրվում են մտքեր, միտք հուշող բառեր և գաղափարներ, որոք խրախուսվում են, և որոնց դեպքում բացառվում է քննադատությունը: Երեխաները ազատ արտահայտվելու հավասար հնարավորություններ ունեն: Այսպես բոլոր մտքերը գրառվում են նրանց կողմից: Հարկավոր է ուշադրություն դարձնել դասի տեքստի մեջ կարմիրով գրված բառերին և կապույտով գրված բառակապակցություններին, որոնք աշակերտը պետք է գործածի դասը պատմելու ժամանակ: Նոր բառերի իմացությունը հարստացնում է նրա բառապաշարը, իսկ տեքստում հաճախակի հանդիպող պատկերավորման միջոցների գործածությունը զարգացնում է երևակայությունը և պատկերավոր մտածողությունը:



Երկրորդ մեթոդը՝ գաղափարների քարտեզագրումը, կիրառում ենք լեզվական նյութի իմացության խթանման համար: Այն կարող է ունենալ այսպիսի տեսք.



Ջ-Ճ-Չ

- Ճանաչել, ճիպոտ, վիճակ, պերճ, չամիչ, չքնաղ, աչք, դարչին, կակաչ, զեղչ, փուչ
- ջուր, Ջերմուկ,Բջնի, Դիլիջան, չղջիկ, աղջամուղջ, ելևէջ, եղջերու, անուրջ, հաղարջ, որջ
- աջ, առաջ, առաջին, իջնել, մեջ, ոջիլ, զիջել, ջոջ, քաջք
- արջ, թրջել, որջ, երջանիկ, վերջ, լուրջ, մրջյուն
- աղջիկ, զղջալ, ողջ

Երեխաները մեկ առ մեկ հիշում են ձ-ծ-ց և ջ-ճ-չ բաղաձայնների ուղղագրությանը և ուղղախոսությանը վերաբերող կանոնները և գրատախտակին գրում դրանց համապատասխան օրինակներ.

Ձ-Ծ-Ց

1. Ծ-ն և ց-ն բառի բոլոր դիրքերում գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Օր.՝ ծիծաղ, ծափ, կայծակ, ցնցուղ, ցնցոտի, Արցախ, կորցնել, հինավուրց, ուրց, տրցակ և այլն:

2. Ձ-ն հիմնականում գրվում է այնպես, ինչպես արտասանվում է: Օրինակ՝ ձայն, ձյուն, օձիք, արվարձան, Օձուն, հուշարձան, հորձանք, լորձ, գեղձ, իղձ

3. Կան գրության և արտասանության որոշ տարբերություններ:

Մի շարք դեպքերում բառամիջում և բառավերջում ձ գրվում, բայց ց է արտասանվում՝

ա) ր-ից հետո. արձակ, բարձ, բարձել, բարձր, դարձ, դերձակ, խուրձ, հանդերձ, հարձակվել, Համբարձում, որձ, վարձ, փորձ,

բ) ձայնավորից հետո. օձ, օձաձուկ, օձագալար

գ) ղ-ից հետո. դաղձ, դեղձ, դեղձան, դեղձանիկ

Ջ-Ճ-Չ

1. Ճ-ն և չ-ն բառի բոլոր դիրքերում գրվում են այնպես, ինչպես արտասանվում են: Օր.՝ ճանաչել, ճիպոտ, վիճակ, պերճ, չամիչ, չքնաղ, աչք, դարչին, կակաչ, զեղչ, փուչ և այլն:

2. Ջ-ն հիմնականում գրվում է այնպես, ինչպես արտասանվում է: Օր.՝ ջուր, Ջերմուկ, Բջնի, Դիլիջան, չղիկ, աղջամուղջ, ելևէջ, եղջերու, անուրջ, հաղարջ, որջ և այլն:

3. Կան գրության և արտասանության որոշ տարբերություններ:

Մի շարք դեպքերում բառամիջում և բառավերջում ջ գրվում, սակայն չ է արտասանվում՝

ա) ձայնավորից հետո. աջ, առաջ, առաջին, իջնել, մեջ, ոջիլ, զիջել, քաջք և այլն:

բ) ր-ից հետո. արջ, թրջել, վերջ և այլն:

գ) ղ-ից հետո. աղջիկ, զղջալ, ողջ և այլն:

Ապա անցնում ենք դասի հիմնական և վճռորոշ մասին՝ հարցմանը, որին հետևելու է գնահատումը: Նախատեսել ենք գնահատել երեք աշակերտի, որոնք միմյանց շարունակելով և օգտագործելով մտագրոհի մեթոդի տված հնարավորությունը՝ կվերարտադրեն տեքստի բովանդակությունը: Դասընկերները երեք միավորանոց բալային համակարգով կգնահատեն իրենց ընկերոջ պատասխանը՝ լրացումներ անելով և շտկելով պատմելու ժամանակ թույլ տված թերացումները և սխալները: Այդպիսի թերացումներ կարող են լինել խոսքի պարզունակությունը, տեքստի խիստ համառոտ, ոչ գրական, գեղարվեստականությունից զուրկ շարադրանքը, գրագետ խոսք կազմելու հետ կապված դժվարությունները, քերականական սխալները, բառերի ոչ տեղին գործածությունը, խոսքի մեջ գեղարվեստական-արտահայտչական և պատկերավորման միջոցների սակավությունը և այլն: Այս կերպ կատարված գնահատումը բազմակողմանիորեն արտացոլում է աշակերտի լեզվական, հաղորդակցական, ճանաչողական, ինչպես նաև անսխալ բանավոր խոսք կազմելու հմտություններն ու կարողությունները: Գնահատականը արդարացի է, որովհետև արտահայտում է ոչ թե մեկ մարդու, թեկուզև դա լինի ուսուցիչը, այլ բոլոր ընկերների միասնական կարծիքը; Իսկ այդ կարծիքը չի կարող կողմնակալ լինել. չէ՞ որ, ի վերջո, երեխաները փորձում են արդարացնել ուսուցչի վստահությունը, որը նրանց գնահաատելու պատասխանատու առաջադրանք է տվել:

Գնահատման երկրորդ փուլում խնդիր ենք դրել բացահայտելու երեխայի լեզվական գիտելիքները, որ վերաբերում են ջ-ճ-չ, ձ-ծ-ց և մնացած այն բաղաձայնների ուղղագրությանը, որը երեխաներն արդեն սովորել են: Դա ևս իրականացվում է երեք միավորանոց գնահատմամբ, որը տրվում է ճիշտ գրված ինը բառի դիմաց, ասենք՝ վարձել, ուրց, թխվածք,աղջամուղջ, մրջյուն, վայրէջք, երկվորյակ, հնէաբան, եղրևանի:

Երրորդ փուլը ստուգում է սովորողի գիտելիքը բառագիտությունից: Նա պետք է իմանա տեքստի՝ կարմիրով գրված այն բառերի բացատրությունը, որոք հանդիպել են այս և նախորդ դասերում: Այն ևս արժե երեք միավոր և գնահատվում է ինը բառի համար, այսինքն՝ ճիշտ ասված յուրաքանչյուր երեք բառի համար աշակերտը վաստակում է մեկ միավոր:

- Պատգամ- Մեկի կողմից իր հետնորդներին կամ հետևորդներին տրված պատվեր:
- Հանց- Որպես, ինչպես:
- Քերթողահայր-Բանաստեղծների, գրողների մեջ երևելին՝ ամենանշանավորը:
- Ցասում – Սաստիկ բարկություն, զայրույթ:
- Հնձան – Այգիներում գետնի մեջ փորված և մաքուր շինված ավազան, որի մեջ լցնում են խաղողն ու ոտքերով ճզմում:
- Ռահվիրա- 1. Մի բան սկզբնավորող, հիմնադրող: 2. Առաջնորդ:
- Մախաղ- Փոքր տոպրակ, որի մեջ ուտելիքի պաշար են դնում:
- Քողտիկ- Փոքրիկ տուն, հյուղակ:

Ինչպես նախորդ դեպքերում, այս անգամ ևս հարցադրումը և գնահատումը կատարվում են դասընկերների կողմից:

Ահա և եկավ աշակերտին վերջնական գնահատական տալու պահը: Հավաքած բոլոր միավորները գումարվում են և արտահայտվում մեկ թվանշանով, որը ցույց է տալիս մայրենիի՝ նրա իմացության մակարդակը: Չմոռանանք բոնուսների մասին, որոնք տրվում են իրեց առավել ակտիվ դրսևորած աշակերտներին՝ նրանց ոգևորելու և մնացածներին ևս ակտիվության մղելու համար: Դա կարող է լինել, ասենք, պարզապես խրախուսանք բառերով, կարող է լինել արտահերթ դաս պատասխանելու հնարավորություն կամ էլ կես միավոր, որը կօգնի նրան հաջորդ անգամ դաս պատասխանելու ժամանակ գնահատականը դեպի վեր կլորացնել:

Հարցման վերջում ի մի են բերվում և ամբողջացվում ձեռք բերված գիտելիքները հայոց լեզվից և գրականությունից:

Գրատախտակին գրվող բառերի քանակը (մեզ մոտ՝ ինը), բացատրվող բառերի քանակը (մեզ մոտ՝ ինը), պայմանական է: Էականը աշակերտին գնահատելու մեր մոտեցումն է, որի արդյունավետությունը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով.

-Աշակերտը բավարարված է իր գնահատականով, որովհետև տեսնում է, որ «խաղի կանոնները» հավասար են բոլորի համար, և իրեն գնահատելու գործում ոչ մի բաց տեղ կամ թերություն չկա, հետևաբար գնահատականը անկողմնակալ է և թափանցիկ: Իսկ արդարամտությունը այն կետն է, որի վրա խարսխվում է երեխայի նոր ձևավորվող աշխարհընկալումը, և չի կարելի այն խաթարել:

-Այդ գնահատականը համակողմանիորեն արտահայտում է երեխայի գիտելիքները երկու առարկայից էլ՝ և՛ հայոց լեզվից, և՛գրականությունից:

- Հավասարապես կարևորվում է երկու առարկաների իմացությունը, որովհետև մեկ թվանշանը երկու առարկաների գնահատականների միջին թվաբանականն է

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր աշխատանքի նպատակն էր ներկայացնել 5-6-րդ դասարաններում մայրենիի գնահատման մեր փորձը: Այդ գնահատման արդյունքում մենք կարողացանք հասնել մեր առջև դրված նպատակին.

ա) Աշակերտները արտահայտեցին հեքիաթի հիմնական գաղափարը՝ վերարտադրելով այն:

բ) Անսխալ բանավոր խոսք կազմելուն օգնեցին ընկերները՝ ուսուցչի ուղղորդմամբ:

գ) Սովորեցին և վերհիշեցին առնվազն ինը բառի ուղղագրություն, որը վերաբերում է բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ջ-ճ-չ, ձ-ծ-ց բաղաձայններին և ձայնավորներին:

դ) Ձեռք բերեցին հմտություններ և կարողություններ՝

1. Ճանաչողական.-ա) զգայության, ընկալման, մտապատկերման, բ) վերլուծելու, գ) եզրահանգումներ անելու, դ) ընդհանրացնելու, ե) առողջ հետաքրքրության,զ) քննադատելու, է) ինքնուրույն որոշումներ կայացնելու և հիմնավորելու,
2. Հաղորդակցական.-ա) լսելու, ընկալելու և համարժեք վերաբերմունք դրսևորելու, բ) բանավիճելու, գ) բանավոր խոսք կառուցելու, դ) տրված տերմինները, հասկացությունները և արտահայտությունները ըստ նշանակության և տեղին օգտագործելու, դ) ժամանակակից հաղորդակցման տեխնիկական միջոցներից օգտվելու
3. Համագործակցային.-ա) խմբում աշխատելու, միասնական որոշումներ ընդունելու և դրանց համար պատասխանատվություն կրելու, բ) սովորել և սովորոցնելու, գ) առողջ մրցակցություն ձևավորելու, դ) ուրիշների կարծիքները և շահերը ճանաչելու և ընդունելու և այլն:

ե) Փորձ կատարեցին զարգացնելու որոշ կարողունակություններ՝ ա) լեզվական կարողունակություն և գրագիտություն, բ) սովորել սովորելու կարողունակություն, գ) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն, դ) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն:

Աշխատանքի ընթացքում պահպանվեցին ընթացիկ գնահատման գլխավոր սկզբունքները՝ հավաստիություն, հիմնավորվածություն, հուսալիություն, մատչելիություն, արդարություն, անկողմնակալություն, թափանցիկություն:

Ավարտելով՝ ուզում եմ ավելացնել, որ այսօր մենք՝ ուսուցիչներս, մեր դասը ավելի ստեղծագործական և արդյունավետ դարձնելու բազմաթիվ ու բազմապիսի հնարավորություններ ունենք և որևէ կերպ կաշկանդված չենք մեր մտահղացումներն իրագործելու հարցում: Այստեղ կարևոր է միայն, որ մենք հավատարիմ լինենք այն առաքելությանը, որը որդեգրել ենք դպրոց մտնելու առաջին իսկ օրից և սիրենք մեր աշխատանքն ու երեխաներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Դ. Գյուրջինյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Էդիթ Պրինտ, 2012 / Մայրենի. հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասագիրք /
- Դ.Գյուրջինյան, Թ.Ալեքսանյան, Ա. Գալստյան, Էդիթ Պրինտ, 2011 / Մայրենի. ուսուցչի ձեռնարկ. 5-6-րդ դասարաններ
- Վ. Գյուլազյան, Լ. Առուշանյան, Մ. Գասպարյան, Երևան, 2009 / Ուսուցչի ուղեցույց-տետր. օրվա դասի պլան
- Մ. Մկրտչյան, Բյուրակն կրթական համալիր, Երևան, 2009 / Կոլեկտիվ ուսուցման տարրերը. մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար:
- Ա. Բալայան, Զանգակ, Երևան,2021 / Ուսուցչի օրագիր